

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍԵՂԴԱԿԵԱՆ, Արիստակէս եպ. — Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը:—Ս. Պետերբուրգ, տպ. Յ. Լիբերման, 1898. 262 էջ. գինը 1 ռ.:

Արիստակէս արքեպ. Սեղրակեանի ալս գիրքը ունի հրկու տեսակ բովանդակութիւն. գրքի որոշ էջերը խկապէս վերաբերում են Շահխաթունեանցին, և որոշ էջեր՝ նորան չեն վերաբերում, և ահապէս, որ նորան վերաբերեալ էջերի թիւը կազմում է գրքի գլխի է կէսը, ահա էլ եթէ յօգուտ Շահխաթունեանցի բաւականին զիջողութիւններ անելու լինինք, Շնորհիւ ալդ հանգամանքի՝ գիրքը կարգալիս՝ ընթերցողի ուշքից շատ լաճախ անհետանում է Շահխաթունեանցի պատկերը, թէև դորանով ընթերցանութիւնը նազ հետաքրքրական չի դառնում, չնորհիւ ահա բանի, որ միջանկեալ էջերը չօշափում են աւելի ևս կարևոր պատմական իրողութիւններ, քան ինչ որ ներկայացնում է ինքը Շահխաթունեանցի կեանքը ու կատարած դերը, եւ չնալած դորան՝ մենք պէտք է դէմ լինենք ալդ ձևին, որը նոր ժամանակների հասկացողութեանը գիրք հեղինակելու մասին բոլորովին հա-

կառակ է: Շեղումներ թույլտրելի են մի գրքում, բայց միայն որքանով որ նոքա գալիս են բացատրելու խնդրի ալս ու ահա հանգամանքը. ներկալ զէպրում ալդքան ընդարձակ շեղումների անհրաժեշտութիւնը մեզ համար ակնադրնի չեղաւ, նամանաւանդ որ գրքի մի տեղում դորա համար հարկաւոր է եղել վերապատմել ու նոյն իսկ արդարապէս պ. Երիցեանի «Ամենալն Հայոց Կաթողիկոսութիւն» գրքից մի քանի տասնեակ էջեր (տես գրքի էջ 51—102 և լատկապէս էջ 70—102), որպէս և լատնում է ինքը հեղինակը. ձիշդ է, Շահխաթունեանցը անմասը չէ ալդ էջերում արած պատմութեանը. բայց միայն ի միջի ալոց. նա կատարում է ալդ միջանկեալ դործում անդոյն դեր, մի դեր որ կարելի էր պատմել մի-երկու էջում, առանց որ դորանով որ և է բան պակսէր Շահխաթունեանցի կենսագրութիւնից: Էջ 152—167, ուր խօսւում է Ներսէսի և կաթողիկոսի անունը եկեղե-

քիներում չիշտակելու կանոնների մասին, արդէն ոչ մի կապ չունի Շահխաթունեանցի հետ. նոյնպէս և լազարեան եղբայրների գրածը Յովհ. կաթ. Կարեցուն (էջ 132—138): Այդ կտորները, շտո կարեոր 19-րդ դարի Հալոց հոգևորականութեան պատմութեան համար, ամիսս է հրատարակել միջանկեալ էջերի մեծով. նոքա պէտք է չադուկ գրածների մէջ իրենց տեղը գտնեն և կամ ուղղակի հրատարակեն իբրև պարզ «նիւթեր»:

Սակալն անցնենք:

Շահխաթունեանցը Արիստ. եպ. Սեդրակեանի գրած քում պատկերանում է որպէս բանասէր՝ աչս խօսքի մեղեմում սովորական դարձած մըդքով՝ սիրող գրականութեան, հաւաքող, ուսումնասիրող: Նա ուսումնասէր էր, նշաւ առաջինը, որը մեծ սէր ցոյց տւեց էջմիածնի Գրադարանին նւիրելու, նորան հարստացնելու ու գրքերը կարգի բերելու համար. նաև առաջինն էր, որ տւեց էջմիածնի ու նորա շրջադեղերի հնութիւնների նկարագիրը («Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացի Արարատար», 2 հատոր, 1842 թ., տպ. էջմիածնալ Մալր Աթոռի) և Դաւիթ- Դանիէլեան անցքերի պատմութիւնը:

Շահխաթունեանցի անունը կապւած է Ռուսիայի հայ հոգևորականների ուսումնականութեան պատմութեան հետ: Նրիցեանի և Արիստ. եպ. Սեդրակեանի ներկայ գրքում հրատարակած վաւերագրերից կարելի է դուրս բերել աչս եղբայրացութիւնը, որ չհաշւելով Ներսէս Աշ-

տարակեցուն և լազարեան եղբայրներին, որոնք ահագին զարկ են տալիս զպրոցական ուսման Ռուսիայի հայերի մէջ, դարուս առաջին տասնեակ տարիներում Ռուսիայում չի եղել և ոչ մի հայ ուսումնական հոգևորական. երկրորդ տասնամեակում հայ հոգևորականներից Ռուսիայում «գիրտակա-նի» համբաւ են սկսում վաչելել երկու հոգի, բայց միայն արեւմտեան հայերից, որոնք հաստատուել էին Ռուսիայում և կաթողիկոսիւնից դարձել լուսաւորչականութեան. դոքա էին՝ Սերովբէն և Միքայէլ Սալլանթեան, որոնք լեռագալում բարձրացան եպիսկոպոսի ու վերջինս նաև արքեպիսկոպոսի ասորիճանի ու եղան ուսուցիչներ Մոսկուայի լազարեան ձեմարանում (դոցանից Սերովբէն եղաւ ապա թեմական առաջնորդ Աստրախանում): Աչս նոյն երկրորդ տասնամեակում մենք տեսնում ենք նաև մի անձ, որը հոգաբար է լինում էջմիածնի միաբանութեանը մի քանի ուսումնական մարդիկ տալու. դա է էջմիածնի պատւիրակը Կ. Պոլսում՝ Աստուածադուր արքեպիսկոպոսը, որը իւր չարմար և կարող զիրքից օգտուում է ու Կ. Պոլիս 1816 թականին իւր մօր բերում իւր միջոցներով կրթում գիրտութիւնների մէջ երեք հոգու՝ Արիստակէս¹⁾ Ալթուն-ճեանցին, ոմն Աբրահամին և Յովհան. Շահխաթունեանցին, որոնք ամենքն էլ լեռող վարդապետ ձեռնադրւեցին:

¹⁾ Սեդրակեան սրբազանը նորան չիշում է միայն որպէս Արիստակէս, բայց մի գովումէնորից երեւում է որ աղգանունը Ալթունճեանց է:

Դոցանից Արիստակէսը Կ. Պոլսից ապա ղրկուեմ է Զմիւռնիա, ուր փեղական չափոյնի մի հալկարանի մօտ վարժուեմ է հայերէնում և ապա մըրոնում ֆրանսիացիներէ հիմնած գըպ-րոցը. Աբրահամը Կ. Պոլսում սովորեց հաւերէնը, տաճկերէնը և մաթեմատիկական գիտութիւններ (թւարանութիւն, տոմարագիտութիւն և տեսական երկրաչափութիւն). Շահ-խաթունեանցը սովորեց հայերէն և չոնարէն. Դոցանից Արիստակէսը, որպէս երևում է, անցաւ ապա Նգիւղոս, և պէտք է կարծել որ չվերադարձաւ Ռուսաստան. զոնէ նորահեղքը չգորանք. Աբրահամի մասին աւելանք գիտենք որ նա վերադարձել էր Էջմիածին. դորանից աւելին մենք ալն գիտենք միայն, որ նորակազմած օրացոյցները Աստածաբոլոր եպիսկոպոսը, Կ. Պոլիս եղած ժամանակ, զրկեց Ներսէսին ի Իֆլիս, ուր և տպեցին 1828 թականին. (տես Ներսէսանց՝ Ներս. դպր. 75-ամեալ պատմ. I, էջ 127): Բայց Շահխաթունեանցը 10 տարի Կ. Պոլիս մնալուց չեղող վերադարձաւ Աստածաբոլոր եպ. հետ 1826-ին Էջմիածին, ուր և նորա ձեռքով վարդապետ ձեռնադրեց:

Այսպէս է որ Էջմիածին ընկնում է, պէտք է կարծել, առաջին անգամ ուսումով մարդ, իբր միաբան, այսպէս ասած՝ էջմիածնականներից, որովհետեւ Շահխաթունեանցը (Շահրիարցի) մանկութիւնից մինչև 1816 թականը ուսել էր Էջմիածնում և 1826-ից միշտ էլ մնաց Էջմիածնում:

Այսպիսով շնորհիւ Աստածաբոլոր եպիսկոպոսի Էջմիածինը ունենում է մի երկու շատ թէ քիչ գիտուն վար-

դապետներ. Այդ եպիսկոպոսի ու լի-նելու մասին սրբազան Աղարակեանը, որպէս երևում է, միայն այսքանը գիտէ, որ նա Նիքեմ կաթողիկոսի հրամանով պատրիարկ գնաց Կ. Պոլիս, մնալով աշտոնը մինչև 1826-ի սկիզբը: Բայց թւականների և անունների նոյնութիւնը մեղհամարանկաւ կած է դարձնում որ դա ալն Աստածաբոլոր արքեպիսկոպոսն է, որը Ներսէս Աշտարակեցուց անմիջապէս առաջ, աշխնքն մինչև 1814 թականը, Թիֆլիսում վրաստանի հաւոց թեմի առաջնորդն էր. Նւթէն գրքի մէջ չի ասւած թէ երբ Աստածաբոլոր արքեպ. Կ. Պոլիս գնաց, բայց այդ պէտք է եղած լինի 1814-ի սկզբից ոչ առաջ. (Ներսէսը Թիֆլիս եկաւ 1814-ի մարտին). և որովհետեւ 1824 թ. մալիսին նորա գրած նամակից Նիքեմ կաթողիկոսին (տ. էջ 8) երևում է որ 1824-ին իւր նորակաթեման ժամանակաւիջողը արդէն լրացած էր, ուստի հաւանական է որ նա ուղարկել էր նւիրակ 10 տարով, սկսած 1814 թականի սկզբից:

Որոնելով ալ գէճքեր, մենք պիտի լինենք Ալամդարեան Յարութիւն վարդապետին, որը եղաւ զըպրօցական գործիչ (առաջին տեսւելը Ներս. դպրոցի): Ի նկատի առնէք, որ Ալամդարեանն էլ աշակերտած էր մի արեւմտեան հայ ուսուցչի՝ Սերովբէ Պարկանեան անւանի վարժապետի մօտ, որը, ինչպէս չափոյնի է, Կ. Պոլսից վերադարձած էր Աստարխան դեռ ևս 18 դարու վերջերքը, ինքը աշակերտած լինելով վննեպկի Մխիթարեաններին:

1820-ական թւականներին վերջերքը, առինքն գրեթէ անմիջապէս Ալամդարեանի Թիֆլիս գալուց ու Շահխաթունեանցի էջմիածին հաստատուելուց չեղով՝ էջմիածնում երևում է մի նոր գէմք եւ, ուսումնական նկարագրով. դա՛ զպիւր Մսուրն է, չալոնի Մսեր Մսերեանցը, որը մեղմում իւր առաջին տարիները գործեց էջմիածնում ու Թիֆլիս, և ապա միայն անցաւ լազարեան ճեմարանը. Եւ ուսորից էր եկել նա.— Զմիւռնիակից. արեւմտեան հայերից էր նա:

Երեսնական և քառասնական թւականներին մենք ալ իս չենք տեսնում ուսումնական նկարագրով նոր մարդ էջմիածնում. իբրեւ իսկապէս միաբան, ուրեմն, մնում էր Շահխաթունեանցը միայնակ մինչև իւր մահը 1849 թ., որովհետեւ իւր աստիճանական կեանքով, փոփոխամիտ ոգով և մի քիչ էլ քմահաճ, թեթեւամիտ ու «բարձրապարանոց» բնուորութեամբ երևանցի Մսերոպ Թաղիադեանցը իրեն անպէտք դարձրեց էջմիածնի համար, ուր նա, 1823-ին Հաղպատից անսպասելի կերպով Հնդկաստան անգլատանալուց չեղով՝ 1830-ական թւականներին նորից մի կարճ միջոցով երևաց, բայց նորից «փախչելու» համար, ալ անգամ արդէն Կ. Պոլիս, ապա նորից Հնդկաստան¹⁾: Թաղիադեանցը,

հետաքրքրական մնալով իբրեւ երևույթ, իւր հպերէնագիտութիւնով ու անգլիերէնի քաջ տեղեակ լինելովն հանդերձ՝ չկարողացաւ օգտակար լինել էջմիածնի միաբանութեան լուսաւորութեան գործին. դորա համար պէտք էր գէթ մի փոքր աւելի հաստատախմուտիւն և դիւցիպլինի վարժութիւն, քան ինչ որ նա ունէր. այնպէս որ նա ոչ կարողացաւ 1820-ական թւականներին միջերթում Ներսէսին իւր նամակներով Հնդկաստանից իրեն ընդունել քալ որպէս ուսուցիչ, և ոչ 1832-ի սկզբներում կարողացաւ մի քանի ամիս դիմանալ էջմիածնում և օգտակար լինել գէթ Կարբեցուն, եթէ երբէք որ և է ուսումով մարդ կարող էր նորան օգտակար լինել:

Այս մօտեցումները անելով մենք նախ տեսնում ենք թէ ինչ կարևորութիւն է ներկայացրել արեւմտեան հայութիւնը արեւելեան հալոց զպաւթեան համար դարուս առաջին տասնամեակներում. երկրորդ ճշդելու համար Արիստ. եպ. Սեղրակեանի աշխտողները:

«Ի բաց առնելով մի մեծ և պատկառելի անուն, Ներսէս Աշտարակցուն, որ իւր հանձարաւոր և բազմակողմանի գոր-

1831 ին Երեւան և 1832-ին էջմիածին վերադառնալուց չեղով՝ նորից ուղղակի Հնդկաստան վերադարձաւ. բաց դա սխալ է. մեզ չալոնի է որ Կ. Պոլսի Հալոց պատրիարք Աղանի Ստեփանոսի ժամանակ (նա պատրիարք էր 1831—39 թթ.) Թաղիադեանցը Կ. Պոլսումն էր և ուսուցչութիւն էր անում Կուսկունճուքում՝ Սերվէրեան ամիրայի հաստատած ուսումարանում:

¹⁾ Արիստ. եպ. Սեղրակեանի ներկայ աշխատութեան մէջ բերած են շատ արժէքաւոր նամակներ Թաղիադեանցի մասին (տ. էջ 231-246). բայց էջ 244-ի տողերից կարելի է եզրակացնել թէ հեղինակը կարծում է որ Թաղիադեանցը Հնդկաստանից

ծուռէութիւնով արդարապէս պիտի գրաւի ամբողջ կէս դարի պարմութեան փառաւորագուն էջերը,—վերոլիշեալ խաւարամած ժամանակամիջոցում երևում են շատ սակաւաթիւ եկեղեցականների անուններ, որոնք կամ իրանց պաշտօնավարութիւնով կամ միաւոր աշխարհաբնութիւնով արժանի են լիշարակութեան: Աւելիսինների մէջ ամենից նշանաւոր և ամենից արդիւնաւոր եկեղեցական գործիչ հանդիսանում է հանգ. Յովհաննէս Շահաթունեանցն, որին հարկաւոր է աւելի ճանաչած լինել, քան որչափ հանաչել է, և որի լիշարակին պարտաւոր ենք աւելի լարզանք ընծայել, քան որչափ սովորաբար ընծայել է» (էջ 5):

Ի հարկէ, զերազատելի կ'լինէր, Ժթէ հեղինակը «շատ սակաւաթիւ եկեղեցականներ» խօսքի փոխարէն ուղղակի անւանէր իւր ճանաչած արժանաւոր եկեղեցականներին ալդ ժամանակներից. թերևս դոքա, գէթ էջմիածնի համար, նոյն երկու անձերը լինէին, որոնք լիշում են Ս. Պետրերուբի հալոց վարդապետ Նիքիւմ Ալթինեանցի 1843 թ. դեկտ. 30-ի նամակում առ յեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսը, ալն է Շահաթունեանցից ղուրս՝ Ղուկաս եպ. և Եսալի վարդապետ, «որ նորոգ իցէ չառաջացեալ ուսմամբ», (տ. գրքի էջ 143): Բայց ուսումնասէր անձ, որպէս երեսց վերը արած մեր տեսութիւնից, էջմիածնի միաբաննե-

րից և էջմիածնի մէջ եղածներից կար միալն Շահաթունեանցը:

Հալ հոգևորականութեան մէջ ալն նոր տարրը մի տեսակ զոյգ է բըռնում Աբովիան-Նազարեան ուսումնասիրական և, անհրաժեշտ է աւելցնել՝ հայրենասիրական հոսանքի հետ, և ալդ երկու տարրերը չաճախ իրար են շիւում և իրար ձեռք մեկնում՝ թղթակցութիւններով և նոյն իսկ խմբումներով: Ալդ խմբումներից մէկի մասին մի լիշարակութիւն զրոնում ենք ներկալ գրքի մէջ, (տես Նազարեանցի համակը Շահաթունեանցին, չարկապէս էջ 198 և 201), բայց ղեռ մնում է անչալո թէ ովքեր են եղել «ազգագուր» գործի համար հաւաքած «հայրենասէրները» և թէ ինչ նպատակ են նոքա ունեցել (խօսքը 1847-ին է վերաբերում), Չպէտք է սակալն կրթական և գրական շրջանից ղուրս բաներ են թագրել «ազգագուր» և «հայրենասիրական» խօսքերի տակ: Ինչ և է, բայց Շահաթունեանցը նոյն իսկ իւր ոչ երկրորդաւոր հասակում չիման մէջ էր նոյն հետ, որոնք ալդպիսի խմբումների կազմողներն էին. ալդ չամենալն ղէպս ցոյց է տալիս Շահաթունեանցի ղիրքը ժամանակի հալոց չառաջաւոր մրաժողների մէջ: Ուշադրութեան արժանի է Շահաթունեանցի աւելի երկրորդաւոր հասակում նորա ու մի քանի ընկերների մէջ ղլացած միտքը՝ մի ուսումնասէր միաբանութիւն հաստատել Սևանալ վանքում կամ ալուր (Ղրիմի Ս. Խաչ վանք)—նման Վենետիկի Միթիթարեան միաբանութեան: Սա մի շատ նշանաւոր հանգամանք է,

որ Մխիթար Աբգարացիին իղէսւլ է ծառաել դարուս առաջին դասնամեակներին, որպէս երևում է, բոլոր աչն անձերին, որոնք կամեցել են մեր երկրում կրթութիւն տարածել և գրականութիւն ծաղկեցնել: Ներսէս Աշտարակեցու վերաբերմամբ մենք ալ տեսնա՞ք, երբ գրախօսում էինք պ. Նրիցեանի նոր գիրքը (Ներսիս. դպրոցի 75 ամեակ պատմութիւնը): Բայց Ներսէսը իւր ալդ իղէսւլից աւելի առաջ գնաց, և չնայած որ ինքը հոգևորական էր, նա իւր լոյսերը կղերի—լինի ալդ նոչն իսկ լուսաւորեալ կղերի—հետ չէր կապում, ալ կապում էր ազգի ընդհանուր լուսաւորութեան հետ, որի համար և հիմնեց նա Ներս. դպրոցը, որը ոչ թէ միայն կրթւած հոգևորականներ պիտի տար, ալ կրթւած մարդիկ առհասարակ. աչնպէս որ, նորս գաղափարով, Ներս. դպրոցը պիտի լինէր իւր ընդհանուր բնաւորութեամբ ոչ թէ մի հոգևոր դպրոց, ալ մի աչնպիսի հիմնարկութիւն, որպիսին էր. օրինակ Մոսկուայի Լազարեան ճեմարանը, որի հիմնադիրները յոյս ունէին ազգին ընծալել ոչ միայն կրթւած աշխարհականներ, ալ և կրթւած հոգևորականներ: Աշխարհական և հոգևորական մեզնում մի տեսակ էին մտածում դարուս սկզբներում. աշխարհական Լազարեանները մտածում էին հոգևորականների մասին նոյնքան, որքան Ներսէսը աշխարհականների մասին: Չենք կարող ասել թէ լաջորդ դասնամեակներում առաջաւոր հայերի հաշնաքները ալ նկատմամբ փոփոխւած լինէին: Դա անկեղծաւ ազգային լինելու հետե-

ւանքն է. Դարուս սկզբի առաջին կէտում, բացի ալդ, շատ նկատելի է աչն մտահոգութիւնը, որ պարծառում էր հալ լուսաւորչականներին կաթողիկոսութեան ծաւալումը հայերի մէջ, և աչն համոզումը թէ դորա դէմ կարելի է առնել լուսաւորւած հոգևորականներ առաջ բերելով. չորջ 1830 թականին ալդ հոգսը աւելացաւ նաև բողոքականների հաստատելովը Շուշալ մէջ, էջմիածնում (1828-ին) սկսում են մտածել քարոզիչներ պարտաւորելու մասին. ոմանք մտածում են ի միջի ալդոց նաև դորա համար ուսումնասէր միաբանութիւն հաստատել մեզնում: Այսպիսով կաթողիկոսութեան և բողոքականութեան պրոպագանդան արթնացնում է հալ լուսաւորչական հոգևորականութեան, թէև հալ լուսաւորչականների դարգացման ընթացքում բոլորովին մոռացուց թէ ալ կրօնների պրոպագանդան ինչ խթան էր ծառալել դորա համար: Դա մի փոքր նմանութիւն է բերում 14 դարին, երբ, կաթողիկական (ունիթոական) պրոպագանդան Հայերի մէջ առաջ բերեց ընդդիմադրութեան ողի հալ վարդապետների մէջ, որը ստեղծեց գիտութեան կենտրոններ հալոց վանքերում (Տաթև և ալլը), թէև ալդ գիտական-վարդապետական շարժումը շարունակուց նաև 15-րդ դարում, մինչդեռ 14-րդ դարու վերջում ունիթոական շարժումը արդէն կանգ էր առել: (Համեմատէք Թոմաս Մեծոփեցու Յիշատակարանի հրատարակութեան մէջ Կ. Կոստանեանցի լառաշարանը): Սակաչն չչեղենք, Շահխաթունեանցը սատորիկ տաքացած

է եղև մեզնում ուղղակի մի երկրորդ Մխիթարեան միաբանութիւն հիմնելու գաղափարի վրայ, դարուս երկրորդ տասնամեակի վերջերում, Կ. Պոլսից վերադառնալուց մի քանի տարի չեղոյ Սեդրակեան սրբազանի գրքի մէջ ալ մասին որած տեղեկութիւններէց երևում է, որ գաղափարը արծարծել էր մի փոքրիկ շրջանի մէջ, բայց որ պոսպոգանդան լաջն ճաւալ չկարողացաւ ստանալ և ոչ էլ գործը իրականացաւ:

Հետաքրքրական է այսու ամենայնիւ ժամանակ թէ ինչ անձերի մէջ էր չղացած ալ միտքը: Դոքա են՝ Դիոնիսիոս վարդապետ, Յ. վարդ. Շահխաթունեանցը և Մսեր Մսերեան, ապա ալ մոքին չարում են «ղպիր» Խաչատուր Աբովեանցը, «ղպիր» Առաքել Արարտեանց, Աբրահամ վարդապետը, Տաճկաստանում եղող Եփրեմ, Յովհաննէս և Արիստակէս վարդապետները և լոյս ունէին թէ Զմիռնիաւում համամիտներ կը գործէին: Սալանթեանն էլ պիտի լինէր առաջին աբրահայրը, թէև չի երևում որ վերջինս հաւատում լինէր ալ գործին, թէև Թաղիադեանցը ալ մասնակ (1832 թւին) Երևան էր, բայց Շահխաթունեանցը զգուշացնում է Մսերին, որ գաղտնիքը չը չարտնի նորան, «զի լանհաստատ լինելոյն ի բանս և ի գործս, թերութիւնք քիչ ևս նշմարին տեսանին ի նմա հակառակ ողջախոս մտաց, և անհամաձայնութիւն վարուց և բարուց նորին մերումս ընկերակցութեան...» (ԼՂ 35): Ալ իստորոգը Շահխաթունեանցը կառավարական անձերէից չարտնեց թովմաս Ղորղանեանցին, որ պաշտօնեալ էր Երևա-

նի նահանգապետի մօտ և որը խոստանում է ալ մասին խորհրդակցել թիֆլիսում ի միջի ալոց նաև Ներս. դպրոցի հոգաբարձուների հետ: Թէ ինչ էր գրել Ղորղանեանը Ներս. դպրոցի հոգաբարձութեան, ալ չպտնի չէ Արիստ. եպիսկոպոսին, բայց երկեանի նոր լոյս տեսած «Ներս. դպրոցի 75-ամեայ պատմութիւնը» գրքից (էջ 451) մենք գիտենք թ. Ղորղանեանի հոգաբարձութեանը գրածի բովանդակութիւնը. ալ տեղ կան մեծ դրամորքներ Շահխաթունեանցի ուսումնասիրական գործունէութեան մասին, ալ և կալ լիշատակութիւն Շահխաթութեանցի մի դերի մասին, որ, ինչպէս երևում է, անչալոյ մնացել արքեպ. Սեդրակեանին: Ինչպէս երևում է Ներս. դպրոցի պատմութիւնից՝ թովմաս Ղորղանեանը եղել է Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան (=*կոմիտէ*) անդամ 1831 և 32 թթ. և երբ Երևան է գնացել իբրև պաշտօնեալ նահանգապետի մօտ՝ հետաքրքրել է տեղեկութիւններ հաւաքելու հալոց երկրի անցեալից, որպէս զի չեղող իւր ալ նիւթերը տպագրէ Ներս. դպրոցի տպարանում. և ա՜նա նա իւր ալ ուսումնասիրական գործի համար օրնական է գտնում լանձին Շահխաթունեանցի, որին նա ճանաչել էր իբրև շատ հմուտ Հայաստանի պատմութեանը, աշխարհագրութեանը և ալլն: «Վարդապետս ալ...» (գրած է եղել Ղորղանեանը) զնէ դանխոնջ աշխարանս ածել ի կադարումս զվերոյիշեալ դիտաւորութիւնն և ի միջոցի կարճ ժամանակի արար զայնպիսի զարգացմունս, որք գեր քան

աշխարհն են: (Տես Երկնցեանի նոր գրքի էջ 451): Ղորդանեանը իւր խոստացածը չհրադարակեց. բայց երբի հէնց ալի 1832 թականից է սկսում Շահ-խաթունութեանցը իւր ալն կարեոր երկը պատրաստելու, որ նա հրադարակեց 1842-ին՝ «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւառացն Արարատոյ», 2 հատոր:

Ի հարկէ, մի բաւական խոշոր գրքի մէջ, որը նւիրւած է Շահ-խաթունեանցին, Արիստ. եպ. պէտք է մի փոքր աւելի կանգ առնէր Շահ-խաթունեանցի ալի երկի վրայ, ծանօթացնէր ալի աշխատասիրութեան մէջ գործադրած մեթոդի հետ, որով կը բնորոշէր ժամանակի էջմիածնական ուսումնականի գիտական ուղղութիւնը. դորա փոխարէն մենք գտնում ենք գրքի մասին Ալիշանի մի վկայութիւնը, որը չափ բան չի պարզում: Աւելորդ չէր լինիլ փշադակել որ նոյն այդ ժամանակները Արարատեան աշխարհը կառավարութեան չանձնարարութեամբ հետազոտում էր չափնի Շոպէնը. աւելորդ չէր լինիլ, կից դորա հետ, փշադակել նաև ալն, որ Սարգիս վարդ. Զալալեանը զբաղւած էր մի նոյնպիսի աշխատասիրութիւնով «Ալիշան չափը» հոսթիւնների մասին, և որ ալի աշխատութեան առաջին մասը լոյս տեսաւ հէնց Շահ-խաթունեանցի գրքից քիչ չեղով:

Շահ-խաթունեանցը ներկայանում է որպէս ժամանակի եռանդոր հնախօսը, որը հասկացել էր մի կենդանական գրադարանի կարեորութիւնը. նա առաջինն է լինում, որը էջմիածնի գրադարանը աշխատում է

կարգի բերել, հին ձեռագրերով հարստացնել ալի գրադարանը, օգտուելով մեր ալ վանքերում անօգուտ վար թափւած և մոռացութեան տրւած օրինակներից: Նա է որ կազմում է առաջին անգամ ալի մատենադարանի դրացուցակը. նորան են չանձնւած նաև, մի ալ վարդապետի հետ միասին եկեղեցական իրաւագիրական կանոններ ժողովելը, որ սակաւն մնում է առանց հետևանքի:

Շահ-խաթունեանցը, որպէս երևում է, թող բնաւորութեան տէր է եղել ու չի ներկայացրել որքան և իցէ քաղաքական նշանակութիւն, թէ և նորա անունը խառնւած ենք տեսնում էջմիածնական ալ և ալ անցքերի պատմութեան մէջ: Նա 1828-ին միանում է երեք ալ վարդապետների հետ և ստորագրում Ներսէսի դէմ ուղղած թղթին առ կառավարչապետ բարոն Ռոզէն. լեւոր... վոյմանում. 1832-ին ալ սինոդականների հետ ստորագրում է Յովհաննէս կաթողիկոսի դէմ գրած և ջորա մատուցած բողոքագրին, և լեւոր... դարձեալ բաժանում բողոքաւորներից, երբ սպառնալիքներ են զալիս կառավարութեան կողմից: Ինչպէս երևում է, Շահ-խաթունեանցի խելքը ալնքան էլ չէր կորում քաղաքական խնդիրներից, և կարծում ենք որ միայն քաջքոց է գրքիս հեղինակ Սեդրակեանի կողմից, երբ նա Շահ-խաթունեանցի մասնակցութիւնը Ներսէսի դէմ գրած և բարոն Ռոզէնին ուղղած գրութեանը բացատրել է ուղում նրանով՝ թէ Սեդրակէն և Զաքարիա վարդապետները լքութիւնների գլխաւոր հեղինակ-

ները) «ալլ ընդ ալլոյ» են պարմած եղել իրենց պարտատրած (ռուսերէն գրած) թղթերի բովանդակութիւնը. (տ. էջ 48): Մենք ևս հակած կը լինէինք ալլապէս մտածելու, եթէ միայն մի քանի ալլ իրողութիւններէ, որոնք չիլած են գրքի մէջ, այս հետեանքը դուրս բերած չլինէինք թէ Շահաթթունեանցը կառավարական գործերում համոզմունքի ու բնաւորութեան տէր մարդ չէր: Նա զրադարանական մարդ էր— և ահա բոլորը— Նոյնպէս քաջքոչի է հեղինակի տւած բացատրութիւնը աչն բանի համար, որ Ներսէսը, կաթողիկոս ընտրելուց չեղուց բայց դեռ օծումն չընդունած՝ իւր անունը, իբրև կաթողիկոսի, լիշատակել է տւել եկեղեցիներում, հակառակ Նախնաւանդ սովորութիւններին. «...ըստ որում (Ներսէսը) հնաւանդ եկեղեցական սովորութիւններին և կարգերին հմտութիւնով աչն քան էլ պարծենալ չէր կարող, պարտաւ է լինում սովորութեան խսպառ վերանալուն» (տես էջ 158): Ներսէսը, որը էջմիածնական նշանաւորագոյն գործիչն է եղած դարուս սկզբներէից ի վեր և տեսած Գանիէլի, Նփրեմի, Յովհաննէի կաթողիկոսութիւնները, նա որ ինքը Բեսարաբիայի առաջնորդ էր երբ Կարբեցին կաթողիկոս եղաւ և, ի հարկ է, մինչև նորա օծում ընդունելը իւր՝ Ներսէսի՝ թեմի եկեղեցիներում չլիշատակեց Յովհաննէսի անունը,— և լանկարծ ալլապիսի մի բազմ

մափորձ մարդ 1843-ին, երբ ինքը եղաւ կաթողիկոս՝ չիմացաւ ալլ կարգը?! Մենք աւելի տրամադիր ենք կարծելու, որ Ներսէսը չկամեցաւ բարդութիւն առաջ բերել ալլ խնդրի առթիւ, քանի որ կառավարութիւնը պահանջում էր որ կայսեր հաստատածի անունը անպարտաւ և անմիջապէս չիլի նաև եկեղեցիներում:

Վերջացնենք մեր խօսքը մի քանի տեսնականակաւ նկատողութիւններով: Գրքի մէջ ծանօթութիւնները, իրենց ընդարձակութեան պարտառով, գրքի վերջն են դրել. ալլ լաւ է. բայց, ծանօթութեան բաժնում, ամեն մի ծանօթութեան հոմերի կողքին պէտք է դնել նաև գրքի էջը, որին ծանօթութիւնը վերաբերում է, ալլապէս մի բան գործելը դառնում է երկար որոնում գրքի սկզբի ծալրից մինչև վերջը: Գրքի մէջ առաջ են բերւած երկար քաղած քներ և դուրսէն տներ, որոնց միայն սկզբում և վերջումն են դրւած չափերոները. մինչդեռ, ընդունւած սովորութեան համաձայն, չափերոներ պէտք է դնել ամեն անգամ երբ նոր տող է սկսուում. ալլապէս դարձեալ նոր պարտաւ է ստեղծուում անվերջ որոնումներ իւր թիւրմացութիւններին: Յաճախ միևնույն տողում թէ վերջանում է մի մեծ քաղածք, և թէ սկսուում է հեղինակի խօսքը:

Ա. Ա.